ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 723-Լ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 932-Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

___ _____ 2023 թվականի N _____ Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 723-Լ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 932-Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 19-ի «Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելու պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցության միջոցառումը հաստատելու մասին» N 723-Լ որոշման՝

1) 2-րդ կետի 5-րդ ենթակետում «2023 թվականի հունիսի 30-ը» բառերը փոխարինել «2023 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով,

2) հավելվածի 17-րդ կետում «կդառնա» բառից հետո լրացնել «գործընկեր բանկի» բառերը, իսկ «2023 թվականի հունիսի 30-ը» բառերը փոխարինել «2023 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության **2022 թվականի հունիսի 23-ի** «Կ**ենսաթոշակառուներին անկանխիկ եղանակով վճարումներից հետվճար տրամադրելու պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցության միջոցառման իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 19-ի N723-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**» N 932-Լ որոշման հավելվածի՝

ա) 4-րդ կետում «հունիս» բառը փոխարինել «դեկտեմբեր» բառով,

բ) 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«5. 2023 թվականի դեկտեմբեր ամսվա հետվճարը հաշվարկվում և վճարվում է 2024 թվականի հունվար ամսին։»,

գ) 14-րդ կետում «2023 թվականի օգոստոսի 5-ից 15-ը» բառերը փոխարինել «2024 թվականի փետրվարի 5-ից մինչև 15-ը» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարկմանը հաջորդող օրվանից։
4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև 2023 թվականի հունիսի 25-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ՝ «Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելու պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցություն» միջոցառումից բխող հետվճարների ֆինանսավորելու և եկամտային հարկը վճարելու համար Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից միջոցներ հատկացնելու վերաբերյալ: